

Կազմված է «30» հունիսի 2018 թվականին

Տպագրված է ընդամենը 2 օրինակից
Բաղկացած է 11 (տասնմեկ) էջից
Օրինակ _____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

**«ԱՐՄԴԱՅՎԻՆԳ» ՍՈՒԶՈՐԴՆԵՐԻ
ԱԿՈՒՄԲ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**
ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ N 1/18
ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՄԲ
սառ «30» հունիսի 2018 թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ
«09» «ՀՈՒԼԻՄԻ» 2015 թ.

Գրանցման համար՝ 211. 171. 864644
Վկայականի N՝ 03Ա.1014644
ՀՎՀՀ՝ 01267295

09.07.2015 թվականին գրանցված
կանոնադրության թիվ փոփոխությունը
գրանցված է

Նախագահ՝
ՏԻԳՐԱՆ ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ

« » 2018 թ.-ին

.....

.....

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՄԴԱՅՎԻՆԳ» ՍՈՒԶՈՐԴՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

Երևան – 2018

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ԱՐՄԴԱԻՎԻՆԳ» ՍՈՒԶՈՐԴՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձ) և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

1.2. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենսդրության, այլ նորմատիվ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, անդամության կամավորությունը, իրավահավասարությունը, ինքնակառավարումը, հրապարակայնությունը, անդամների շահերի ընդհանրությունը, բարեխղճությունը և հաշվետվողականությունը, խտրականության բացառումը:

1.4. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Կազմակերպությունը կարող է գործել արտասահմանյան երկրներում՝ այդ երկրների օրենսդրությանը համապատասխան՝ ստեղծելով առանձնացված ստորաբաժանումներ:

1.5. Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝ «ԱՐՄԴԱԻՎԻՆԳ» ՍՈՒԶՈՐԴՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ» հասարակական կազմակերպություն, կրճատ անվանումն է՝ «ԱՐՄԴԱԻՎԻՆԳ» ՀԿ:

Կազմակերպության ռուսերեն լրիվ անվանումն է՝ "АРМДАЙВИНГ" ДАЙВ КЛУБ" общественная организация, կրճատ անվանումն է՝ "АРМДАЙВИНГ" ОО:

Կազմակերպության անգլերեն լրիվ անվանումն է՝ "ARMDIVING" DIVERS CLUB" non-governmental organization, կրճատ անվանումն է՝ "ARMDIVING" NGO:

1.6. Կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում իր պետական գրանցման պահից, կարող է ունենալ հայերեն, անգլերեն լեզուներով կլոր կնիք, խորհրդանիշ, որի նկարագրությունն է՝ ուղղանկյան մեջ պատկերված կապույտ ջրի շիթեր, իսկ մեջտեղում անգլերեն տառերով գրված է Armdiving.am, որի Arm-ը գունավորված է կապույտ, կարմիր, նարնջագույն գունավորմամբ: Կարող է ունենալ նաև դրոշմ, պաշտոնաթղթեր, հաշվարկային, ընթացիկ և այլ հաշիվներ բանկերում՝ ինչպես դրամով, այնպես էլ տարադրամով և իր անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որպես հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում:

1.7. Կազմակերպությունն օգտվում է ՀՀ օրենսդրությամբ իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքներից և կրում է համապատասխան պարտականություններ:

1.8. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Շերամի փողոց, 105 շենք, բն. 79, 0034:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊՍԱԿՆԵՐԸ

2.1. Կազմակերպության առաքելությունն է օտարերկրյա փորձի և լավագույն մասնագետների ներգրավմամբ ջրասուզումը դարձնել հետաքրքրական և պահանջված սպորտաձև:

2.2. Կազմակերպության տեսլականն է՝ Հայաստանը դարձնել միջազգայնորեն ճանաչելի և հետաքրքրական և տարաբնույթ մարզական միջոցառումների կազմակերպման և անցկացման միասնական հարթակ:

Կազմակերպության հիմնական նպատակներն են՝

- զարգացնել ջրասուզումը Հայաստանում և արտերկրում՝ բազմաբնույթ տուրիստական տուրերի, դասընթացների, կոնֆերանսների, ճանաչողական այցերի կազմակերպման և անցկացման միջոցով,
- օժանդակել Կազմակերպության անդամների ներգրավմանը ուսուցողական, գիտահետազոտական, մշակութային և այլ ժամանցային ջրասուզումներին՝ միաժամանակ հանդես գալով նաև որպես կազմակերպիչ,
- ներկայացնել և պաշտպանել Կազմակերպության անդամների շահերը Հայաստանում և արտերկրում,
- աջակցել մարզիկների և մարզիչների որակավորման բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը,
- կազմակերպել կլոր սեղաններ, սեմինարներ, կոնֆերանսներ՝ դայվինգ մարզաձևում առկա խնդիրները վերհանելու և այդ խնդիրների լուծման ուղիներ գտնելու նպատակով,
- համագործակցել ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում գործող նմանատիպ կազմակերպությունների հետ, իրականացնել կազմակերպությունների միջև փորձի փոխանակմանն ուղղված տարաբնույթ ծրագրեր և միջոցառումներ, մասնակցել թեմատիկ ցուցահանդեսներին,
- այս հարցերի կազմակերպման և լուծման հետ կապված համագործակցել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, համապատասխան բնագավառում գործող կազմակերպությունների հետ, համակարգել կազմակերպության անդամների գործունեությունը՝ համատեղ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- անցկացնել ատեստավորման դասընթացներ և, ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ, տրամադրել հավաստագրեր, վկայականներ:

2.2. Կազմակերպությունը կարող է իրականացնել նաև ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ գործունեություն, որն ուղղված է կանոնադրությամբ սահմանված հիմնական նպատակների կատարմանը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Կազմակերպության անդամ կարող են դառնալ Կազմակերպության նպատակներն ու գործունեությունը համակրող, Կազմակերպության գործունեությանն աջակցելու պատրաստակամություն ունեցող, Կազմակերպության կանոնադրության դրույթները ընդունող, ՀՀ, ԼՂՀ և արտասահմանյան երկրների իրավաբանական անձինք, ինչպես նաև 18 տարին լրացած ֆիզիկական անձիք: Մինչև տասնչորս տարեկան անձինք Կազմակերպությանը կարող են անդամագրվել իրենց ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, Կազմակերպությանը կարող է անդամագրվել իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

3.2. Կազմակերպությանը անդամագրվելու և անդամությունից դուրս գալու, Կազմակերպության պատվավոր անդամի կոչումի շնորհման, դրանից զրկելու, ինչպես նաև անդամավճարի վճարման պարտականություն նախատեսվելու դեպքում՝ դրա չափին և վճարման կարգին վերաբերող առանձնահատկությունները սահմանվում են Խորհրդի կողմից հաստատված կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ):

3.3. Կազմակերպությանն անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է ներկայացնում Կազմակերպության խորհրդին (այսուհետ՝ Խորհուրդ), վերջինս էլ որոշում է կայացնում անդամագրման և անդամությունից դուրս գալու, ինչպես նաև պատվավոր անդամի կոչում տալու հետ կապված:

3.4. Կազմակերպությունը կարող է սահմանել անդամվճար: Անդամավճարի չափը և դրա գանձումը կազմակերպելու կարգը սահմանվում են Կանոնակարգով:

3.5. Կազմակերպությանն անդամագրված անձն ազատ է Կազմակերպությունից դուրս գալու հարցում: Կազմակերպության անդամությունից, ինչպես նաև պատվավոր անդամի կոչումից զրկման որոշումը կայացնում է Խորհուրդը՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

3.6. Կազմակերպության այն անդամը, ով (Խորհրդի կողմից անդամավճար սահմանված լինելու դեպքում) 6 (վեց) ամիս անընդմեջ չի վճարում անդամավճար, կամ պարբերաբար խախտում է սույն կանոնադրությամբ նախատեսված դրույթները, կարող է զրկվել անդամությունից՝ Խորհրդի որոշմամբ: Վերստին անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

ա/ ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման և վերահսկողություն իրականացնող մարմիններում, ընդ որում՝ ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում, եթե լրացել է նրա 18 տարին,

բ/ Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով նրա ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, առաջարկություններ և բողոքներ,

գ/ սպառիչ տեղեկատվություն ստանալ Կազմակերպության գործունեության մասին՝ համաձայն «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի,

դ/ անարգել դուրս գալ Կազմակերպությունից,

ե/ մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպվող միջոցառումներին,

զ/ Կազմակերպության նախագահի և Խորհրդի ոչ կանոնադրական գործունեության դեմ բողոքարկել ժողովին կամ դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

է/ անձամբ կամ լիազոր ներկայացուցչի միջոցով ներկա գտնվել Կազմակերպության անդամների ընդհանուր ժողովին (այսուհետ՝ Ընդհանուր Ժողով կամ Ժողով), ընդ որում՝ Կազմակերպության յուրաքանչյուր անդամ Ընդհանուր Ժողովում ունի մեկ ձայնի իրավունք՝ Ընդհանուր Ժողովի քննարկման առարկա ցանկացած հարցի վերաբերյալ: Այդ ձայնը չի կարող փոխանցվել այլ անդամների կամ ոչ անդամների՝ օրենքով թույլատրելի առավելագույն չափով:

ը/ Կազմակերպության խնդիրներն ու նպատակներն իրագործելու համար օգտվել Կազմակերպության գույքից:

4.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

ա/ հոգ տանել Կազմակերպության հեղինակության բարձրացման ու դրա պահպանման մասին, մասնակցել Կազմակերպության աշխատանքներին,

բ/ կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները, ղեկավար մարմինների որոշումները,

գ/ մուծել մուտքի վճար և ամսական անդամավճար՝ Խորհրդի կողմից սահմանված լինելու դեպքում, որոնց չափն ու վճարման կարգը և առանձնահատկությունները սահմանվում են Խորհրդի կողմից,

դ/ բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականություններն ու իրեն տրված հանձնարարությունը,

ե/ չբացահայտել Կազմակերպության գաղտնի տեղեկությունները, որոնց ցանկը սահմանվում է Խորհրդի կողմից:

4.3. Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր պարտականություններում թերացող անդամի նկատմամբ Կազմակերպության ժողովի կամ Խորհրդի որոշմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր՝ ընդհուպ Կազմակերպության անդամությունից զրկում:

4.4. Կազմակերպության անդամությանն առնչվող այլ իրավահարաբերությունները կարգավորվում են Կանոնակարգով:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:

5.2. **Կազմակերպությունն** իր կանոնադրությամբ սահմանված նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով, **իրավունք ունի՝**

ա/ տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին,

բ/ հիմնադրել լրատվության միջոցներ,

գ/ կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի հավաքներ,

դ/ օրենքով սահմանված կարգով ներկայացնել և պաշտպանել իր անդամների, ինչպես նաև կամավորների և շահառուների իրավունքները և օրինական շահերը այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,

ե/ իր կանոնադրությամբ սահմանված կարգով ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ,

զ/ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, վարձակալել և օգտագործել անշարժ և շարժական և օրենքով չարգելված այլ գույք,

է/ օտարել կամ վարձակալության կամ անվճար օգտագործման տրամադրել Կազմակերպությանը պատկանող ցանկացած անշարժ և շարժական գույք,

ը/ կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և այլ գործարքներ,

թ/ ինքնուրույն կազմավորել և տնօրինել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ՝ Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ, այդ թվում՝ արտարժույթով,

ժ/ համագործակցել առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային եւ օտարերկրյա ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպությունների հետ, ինչպես նաև՝ համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու եւ պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել կազմակերպություն կամ անդամակցել նրանց ստեղծած կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը եւ իրավաբանական անձի կարգավիճակը,

ժա/ Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալու նրա մասնակից:

ժբ/ կատարել օրենքով չարգելված այլ գործողություններ:

5.3. Կազմակերպությունը պարտավոր է՝

ա/ Կազմակերպության անդամի պահանջով, 5 աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը և օրենքով նախատեսված այլ փաստաթղթերին, բ/ օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,

բ/ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ ՀԿ օրենք) պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր,

գ/ իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության ժողովի հաստատմանը ոչ պակաս, քան հինգ տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը,

դ/ օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ,

ե/ ՀԿ Օրենքով նախատեսված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի,

զ/ օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում, վարել իր անդամների և կամավորների հաշվառումը

է/ կրել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ

6.1. Կազմակերպությունը, իր կանոնադրական նպատակներին համապատասխան, ունի շահառուներ, ինչպես նաև, օրենքով սահմանված կարգով, կարող է իր աշխատանքներում ներգրավել կամավորների:

6.2. Կազմակերպության հնարավոր շահառուների խմբերն են՝ հիմնադիրները, սուզորդական ակտիվ գործունեությամբ զբաղվող ցանկացած իրավաբանական և ֆիզիկական անձ, ջրասուզման ակումբներ, ակումբի անդամները, ՀՀ, ԼՂՀ և արտասահմանյան մասնագետները, մարզիկները, հրահանգիչները, սուզորդական գործունեությամբ հետաքրքրվող անձիք:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Կազմակերպության կառավարման մարմիններն են՝ Կազմակերպության անդամների ժողովը, Խորհուրդը, նախագահը և գործադիր տնօրենը:

ԺՈՂՈՎ

7.2. Կազմակերպության բարձրագույն մարմինը կազմակերպության անդամների ժողովն է, որն ունի Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում ընդունելու իրավունք: Ժողովը հրավիրվում է 2 (երկու) տարին մեկ անգամ՝ Խորհրդի կողմից անդամների համատեղ հավաքի ձևով, կամ, եթե դա հնարավոր չէ, հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Խորհուրդը որոշում է Ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև Ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան 5 օր առաջ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Կազմակերպության անդամներին կամ կառույցներին:

7.3. Ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամների կեսից ավելին (քվորումն ապահովված է): Ժողովի անցկացման համար քվորումի բացակայության դեպքում հայտարարվում են նույն օրակարգով նոր ժողովի գումարման տարին, ամիսը և օրը:

7.4. Ժողովի աշխատանքը ղեկավարում է Ժողովի նախագահը: Ժողովի նախագահը ընտրվում է Ժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.5. Ժողովի Նախագահը ղեկավարում է Ժողովի աշխատանքը, պահպանում է կարգը, ապահովում է քննարկվող հարցերի վերաբերյալ Ժողովի մասնակիցների՝ կարծիք հայտնելու իրավունքը:

7.6. Ժողովի արդյունքում կազմվում է արձանագրություն՝ հետևյալ կարգով.

1) Ժողովի արձանագրությունը կազմվում է Ժողովի ավարտից 14 (տասնչորս) օրվա ընթացքում, որը ստորագրում են Ժողովի նախագահողը և քարտուղարը:

2) արձանագրության մեջ նշվում են Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը, Ժողովի նախագահողի և քարտուղարի անունը, ազգանունը, օրակարգը: Արձանագրությունը պարունակում է նիստին մասնակցելու իրավունք ունեցող անձանց քանակը, նիստին մասնակցած անձանց քանակը, նիստի օրակարգը:

3) Արձանագրությունը պետք է պարունակի նիստում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, նիստի ընդունած որոշումները:

7.7. Ժողովի արձանագրությունները պահպանվում են Կազմակերպության գտնվելու վայրում: Կազմակերպության անդամներն իրավունք ունեն ծանոթանալ արձանագրության բնօրինակին, պահանջել Կազմակերպության կողմից վավերացված արձանագրության պատճենը:

7.8. Կազմակերպության Ժողովը.

1) ընտրում է և (կամ) վաղաժամկետ դադարեցնում է Կազմակերպության Նախագահի լիազորությունները՝ Կազմակերպության բոլոր անդամների ձայների մեծամասնությամբ,

2) հաստատում է կանոնադրությունը, Կազմակերպության անդամների 2/3 մեծամասնությամբ ընդունում նրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու կամ նոր խմբագրությամբ հաստատելու մասին որոշում,

3) որոշումներ է ընդունում Կազմակերպության գործունեության կարևորագույն խնդիրների վերաբերյալ, ներառյալ՝ առանց սահմանափակման, Կազմակերպության կառուցվածքի հաստատումը, ռազմավարության հաստատումը:

4) որոշումներ է ընդունում այլ կազմակերպություններում Կազմակերպության մասնակցության, այլ իրավաբանական անձ և/կամ Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու, դրանց կանոնադրությունները հաստատելու վերաբերյալ,

5) երկու տարին մեկ անգամ քննարկում և հաստատում է Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում նախագահի կամ գործադիր տնօրենի կողմից հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները,

6) Կազմակերպության անդամների 3/4 մեծամասնությամբ ընդունում է Կազմակերպության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումները,

7) դադարեցնում է Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը,

8) հաստատում է գույքի փոխանցման ակտը կամ բաժանիչ հաշվեկշիռը՝ Կազմակերպության վերակազմակերպման դեպքում, բացի դատարանի վճռով վերակազմակերպումից,

9) որոշումներ է ընդունում Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված մարմինների կազմավորման, ընտրության (նշանակման) կամ նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու (զբաղեցրած պաշտոնից ազատելու) մասին Ժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ.

10) իրականացնում է օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

7.9. Կազմակերպության Ժողովի արտահերթ նիստ հրավիրվում է Կազմակերպության անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի, Խորհրդի կամ Կազմակերպության նախագահի, ինչպես նաև գործադիր տնօրենի պատճառաբանված գրավոր պահանջով: Արտահերթ նիստի հրավիրման օրը և նախնական օրակարգը Ժողովի մասնակիցներին հաղորդվում են դրա հրավիրման օրվանից առնվազն 5 օր առաջ:

7.10. Ժողովի բացառիկ իրավասության հարցի վերաբերյալ որոշումն ընդունվում է, եթե կողմ է քվեարկել կազմակերպության բոլոր անդամների թվի կեսից ավելին:

7.11. Ժողովի աշխատանքներին Կազմակերպության Նախագահի համաձայնությամբ կարող են ներկա գտնվել նաև Կազմակերպության անդամ չհանդիսացող անձինք՝ դիտորդի կարգավիճակով:

ԽՈՐՀՈՒՐԴ

7.12. Կազմակերպության ընթացիկ կառավարման մարմինը Կազմակերպության Խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ):

7.13. Խորհրդի անդամների ընտրությունը և հստակ թիվը ամրագրվում է Ժողովի որոշմամբ: Խորհուրդը գործունեություն է իրականացնում Ժողովի գործունեության միջակայքում ընկած ժամանակահատվածում: Խորհրդի անդամների հստակ թիվը սահմանվում է Ժողովի որոշմամբ: Խորհրդի անդամների թիվը կենտ է և ոչ պակաս երեքից: Խորհուրդը նախագահում է Կազմակերպության Նախագահը:

7.14. Խորհուրդը պաշտոնավարում է ընտրվելուց անմիջապես հետո երկու տարի ժամկետով՝ մինչև հաջորդ ընտրությունները: Պաշտոնաթող խորհրդի անդամները կարող են նորից վերընտրվել նոր Խորհրդի կազմում:

7.15. Խորհրդի անդամը կարող է հրաժարական տալ ցանկացած ժամանակ՝ գրավոր ծանուցում ներկայացնելով Խորհրդին: Խորհրդի անդամը ազատվում է պաշտոնից, եթե նա ճանաչվել է անգործունակ կամ սնանկ:

7.16. Խորհուրդը կարող է ինքը կարգադրել իր հանդիպումների ժամկետները, դրանք կազմակերպելու անհրաժեշտ քվորումը և ընթացակարգը:

7.17. Խորհուրդն իր գործունեությունը իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են Կազմակերպության Նախագահի կողմից՝ առնվազն երեք ամիսը մեկ անգամ: Արտահերթ նիստ կարող է գումարվել Խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի պահանջով կամ գործադիր տնօրենի առաջարկությամբ: Խորհրդի որոշումները ընդունվում են քվեարկողների ձայների մեծամասնությամբ:

7.18. Խորհուրդը ինքն է հետևում իր հավաքների և որոշումների արարողակարգին և պատասխաստու է նիստերի արձանագրությունների (առցանց) հրապարակման համար:

7.19. Խորհուրդը կարող է իր երկու կամ ավելի անդամներին փաստաթղթեր ստորագրելու և Խորհրդի անունից գործառույթներ իրականացնելու իրավունք ընձեռել:

7.20. Խորհուրդն ընտրում է Կազմակերպության քարտուղար: Քարտուղարը պատասխանատու է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով Խորհրդի նիստերի և Ժողովի հավաքների գումարման համար, հավաքների նախնական օրակարգի և արձանագրությունների կազմման, արձանագրությունների (առցանց) հրապարակման և գրանցումային պահեստավորման համար:

7.21. Խորհուրդը ղեկավարող Կազմակերպության Նախագահը կարող է ստորագրել Կազմակերպության Ժողովի և Կազմակերպության Խորհրդի արձանագրությունները: Խորհրդի նախագահը կարող է ներկայացնել Կազմակերպությունը առանց լիազորագրի:

7.22. Խորհուրդը որոշումներ է կայացնում քվեարկությամբ՝ նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Կազմակերպության խորհրդում քվեարկությունը կարող է կատարվել լիազորագրով: Խորհրդի բոլոր նիստերին կարող են մասնակցել Կազմակերպության անդամները: Կազմակերպության բոլոր ընտրովի պաշտոններում ընդգրկված անձիք պաշտոնավարում են երկու տարի ժամկետով՝ մինչև հաջորդ Ժողովի օրը:

7.23. Խորհրդի իրավասությունների շրջանակը ընդգրկում է.

- 1) Ժողովի գումարումը, դրա օրակարգի և գումարման կարգի սահմանումը,
- 2) Ժողովին առաջարկությունների ներկայացումը՝ վերջինիս բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի առնչությամբ,
- 3) Կազմակերպության ռազմավարության մշակումը և ներկայացումը Ժողովի հաստատմանը,

- 4) Կազմակերպության վարչակառավարչական կառուցվածքի հաստատումը,
- 5) Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի ընդունումը,
- 6) Կազմակերպության գործադիր տնօրենի նշանակումը՝ Կազմակերպության Նախագահի ներկայացմամբ, և նրա լիազորությունների դադարեցման վերաբերյալ որոշման ընդունումը,
- 7) Կազմակերպության ընթացիկ գործունեության և միջոցների օգտագործման վերաբերյալ Նախագահի և/կամ գործադիր տնօրենի հաշվետվության հաստատումը,
- 8) Կազմակերպության գործունեության վերաբերյալ Ժողովին հաշվետվության ներկայացումը,
- 9) Կազմակերպությանը անդամների անդամագրվելու և անդամությունից զրկելու հետ կապված հարցերի որոշումը,
- 10) Ցանկացած այլ հարցի լուծում՝ բացառությամբ Ժողովի բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի:

ՆԱԽԱԳԱՀ

7.24. Կազմակերպության առաքելության և նպատակների իրականացմանն ուղղված գործունեությունը համակարգում և ղեկավարում է Կազմակերպության նախագահը (այսուհետ՝ Նախագահ):

7.25. Կազմակերպության Նախագահը ընտրվում է Ժողովի կողմից:

7.26. Նախագահը.

- 1) Միաժամանակ հանդիսանում է Կազմակերպության խորհրդի նախագահ, տնօրինում է Կազմակերպության գույքը՝ կանոնադրությամբ և օրենքով սահմանված կարգով,
- 2) Համակարգում և ղեկավարում է Կազմակերպության առաքելությանը և նպատակների իրականացմանն ուղղված գործունեությունը,
- 3) պատասխանատու է Կազմակերպության գործունեության համար, նախագահում է Ժողովի և Խորհրդի նիստերը,
- 4) ապահովում է Ժողովի կողմից ընդունված որոշումների իրականացումը, ստորագրում և հրապարակում է Խորհրդի որոշումները և վերահսկում դրանց կատարումը,
- 5) ինքնուրույն կայացնում է որոշումներ՝ օրենքի և սույն կանոնադրության սահմաններում,
- 6) արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը, տալիս լիազորագրեր,
- 7) ներկայացնում է Կազմակերպությունն առանց լիազորագրի՝ Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,
- 8) կնքում է գործարքներ, ստորագրում պայմանագրեր, ֆինանսական փաստաթղթեր, բացում բանկային հաշիվներ,
- 9) ստանձնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ և կատարում օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

7.27. Նախագահի բացակայության ժամանակ նրա գործառույթները իրականացնում է Նախագահի կողմից լիազորված Խորհրդի այլ անդամ:

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

7.28. Կազմակերպության ամենօրյա գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է գործադիր տնօրենը (այսուհետ նաև՝ Գործադիր Տնօրեն):

7.29. Կազմակերպության Գործադիր Տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից:

7.30. Գործադիր Տնօրենը.

- 1) Մշակում է և գործարկում վերահսկողության համակարգ, սահմանում է պարտականությունների բաշխում Կազմակերպության աշխատողների միջև, վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության նյութական ռեսուրսների ձևավորման, բաշխման և օգտագործման շրջանակներում առաջացող գործընթացների նկատմամբ,

- 2) ուսումնասիրում և խորհրդատվություն է տրամադրում Կազմակերպության բյուջեի ձևավորման, ծախսի, կայունության և աճի գործընթացների վերաբերյալ,
- 3) դրամահավաքության միջոցով Կազմակերպության Ժողովի հաստատած տարեկան սահմանաչափի ակնկալիքների շրջանակներում քայլեր է ձեռնարկում, մշակում և իրականացնում է ծրագրեր, նպաստում է Կազմակերպության բյուջե գումարի մուտքի գործընթացների պատշաճ իրականացման ուղղությամբ,
- 4) ղեկավարում է Կազմակերպության ընթացիկ աշխատանքները,
- 5) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ,
- 6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- 7) որոշում է կայացնում նոր աշխատողներ ընդունելու և աշխատանքից հեռացնելու վերաբերյալ,
- 8) ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության՝ մեկ միլիոն դրամը չգերազանցող արժողությամբ գույքը, իսկ նշված արժեքը գերազանցելու դեպքում՝ վերոնշյալ գործողությունները կատարում է Ժողովի համաձայնության առկայության դեպքում,
- 9) իրականացնում է Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարմանն ուղղված այլ գործառնություններ, բացառությամբ սույն կանոնադրությամբ սահմանված Ժողովին, Խորհրդին, Նախագահին վերապահված իրավասությունների:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 8.1. Կազմակերպության նյութական և դրամական միջոցները գոյանում են մուտքավճարներից, անդամավճարներից, անդամների ներդրումներից, տնտեսական ընկերությունների, տեղական, օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների, անհատ քաղաքացիների կողմից ստացվող նվիրաբերություններից, այդ թվում՝ դրամաշնորհներից և նվիրատվություններից, կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցներից, դրամական մուտքերից, պետական բյուջեից, իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպություններից ստացված միջոցներից, հանգանակություններից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:
- 8.2. Կազմակերպությանը սեփականության իրավունքով կարող են պատկանել ՀՀ օրենսդրությամբ չարգելված սեփականության իրավունքի ցանկացած օբյեկտներ: Կազմակերպությանը պատկանող գույքը օգտագործվում է իր կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացման համար:
- 8.3. Կազմակերպության ղեկավար մարմիններում ընդգրկված անձինք (բացառությամբ Կազմակերպության նախագահի) Կազմակերպության կողմից կարող են վարձատրվել Կազմակերպության նախագահի կողմից սահմանված կարգով:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊԲՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

- 9.1. Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի կամ դատարանի որոշմամբ: Այդ դեպքում Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով սահմանված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետը:
- 9.2. Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը պարտադիր վճարումներ իրականացնելուց հետո մնացած գույքը, Ժողովի որոշմամբ սահմանված կարգով, օգտագործում է

Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:

9.3. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ, օրենքով սահմանված դեպքում, դատարանի որոշմամբ օրենքով սահմանված կարգով: